$$\begin{array}{r} 45 \text{ ռ. } 63 \text{ կ.} - 27 \text{ ռ. } 54 \text{ կ.} = \\ 107 \text{ ռ. } 80 \text{ կ.} - 64 \text{ ռ. } 68 \text{ կ.} = \end{array}$$

98 ո. 08 կ.—58 ո. 27 կ.՝

82 ո. 20 կ.—33 ո. 05 կ.՝


226. Մեկ աշխորի արժեքը՝ ապաստ եր 3 ո. 50 կ.-ի,
իսկ մի տարի հետո զարձագ 5 ո. 20 կ.: Վորքանո՞վ ավա-
լացագ մեկ աշխորի արժեքը:

227. Բանվորը սեկ որում վաստակեց 8 ո. 40 կ.՝
Ճաշի համար նա ծախսեց 1 ո. 25 կ., նախաճաշի և ընթ-
րիքի համար՝ 1 ո. 94 կ.: Վորքա՞ն դամ մնաց նա ուսու-
թաշի լուղբան 1 ո. 10 կ.-ով չիթ, 28 ո. 7 կ. կոշիկ, և խնայողական դրա-
մարկղ դրեց 15 ո.: Վորքան դրամ մնաց նրա մոտ:


228 Մի կող նախունի չուկայում վաճառեց 45 ո.
60 կ.-ի լուղ և 26 ո. 25 կ.-ի բանջարեղենն: Նա գնեց
17 ո. 10 կ.-ով չիթ, 28 ո. 7 կ. կոշիկ, և խնայողական դրա-
մարկղ դրեց 15 ո.: Վորքան դրամ մնաց նրա մոտ:

ՀՆԳԱՆԻՇ ՑԵՎ ՎԵՑԱՆԻՇ ԹՎԵՐ

229. Համբէչի վրա գ. ե՞ք 9 հազարավոր և ավելաց-
ըե՞ք 1 հազարավոր: Սոացվեց 10 հազարավո՞յ:



10 հազարավոր



1 առանձակագոր

Տասը հազարը թվանշաններով գրում են ալսպես՝
10 000: Քանի թվանշաններով ե գրված 10 000-ը:

Հինգ թվանշաններով գրված թիվը կոչվում ե հինգա-
նիւթ թիվ:

Թիվի մեջ տասնազարավորներն աշխից հաշված հինգե-
րորդ տեղն են գրավում: Տասնազարավորները կազմում են
թվերի հինգերորդ կարգը:

230. Կարգայե՞ք և գրեցե՞ք հետեւալ թվերը.
20 000, 80 000, 50 000, 40 000, 90 000, 70 000, 30 000,
60 000:

231. Թվանշաններով գրեցե՞ք լերեսուն հազար, վաթ-
սուն հազար, իննսուն հազար, լոթանսասուն հազար, հի-
սուն հազար, քառասուն հազար:

232. Դրեցե՞ք և կարգացե՞ք այն թիվը, կորը բաղ-
կացած ե 5 տաս հազարս վոր: 9 տաս հազարավորից,
4 տաս հազարավորից:

233. Համբիչի վրա զցե՞ք 2 տասնազարավոր, դրան
ավելացրե՞ք 4 հազարավոր, ավելացրե՞ք նաև 7 հարյու-
րավոր 5 տասնավոր և 6 միավոր: Կարգացե՞ք ստացված
թիվը: Այդ թվում քանի առանձին միավոր, առանձին
տասնավոր, առանձին հարյուրավոր, սունձին հազարա-
վոր և առանձին տասնազարավոր կա:

234. Կարգացե՞ք ու գրեցե՞ք հետեւալ թվերը.
34 875, 67 415, 86 250, 48 200, 48 750, 48 500, 48 0 3,
60 007, 90 080, 50 091, 65 070, 30 090, 75 405:

235. Հետեւալ թվերից յուրաքանչյուրը քանի տաս-
նազարավոր, առանձին հազարավոր, առանձին հարյու-
րավոր, առանձին տասնավոր և առանձին միավոր և պա-
րունակում.

35 234, 60 725, 37 043, 25 203, 20 083, 15 001,
70 004:

236. Գրեցե՛ք և կարդացե՛ք այն թիվը, վորը բաղկացած և 3 տասն զարավորից 5 հարյուրավորից և 6 միավորից, 1 տասնազարավորի, 5 հաշտարավորից 2 տասնավորից և 7 միավորից, 2 տասնազարավորից և 4 տասնավորից, 8 տասնազարավորից և 2 միավորից:

237. Թվանշաններով գրեցե՛ք՝ ութսուն լեռեք հազար հարյուր քսան լոթ, վաթսուն հազար լոթ հարյուր վաթսուն, իննսուն հազար հարյուր լոթ, քառտսուն հազար հիսուն, իննսուն հազար ութ, վաթսուն հազար լեռկու, քսան հինգ հազար ինն, հիսունութ հազար վեց, քառտսուն ինն հազար լեռկու հարյուր, իննսուն լեռեք հազար վեց հարյուր:

238. Համրիչի վրա զցե՛ք 9 տաս հազարավոր և դրան ավելացրե՛ք 1 տասնազարավոր. Ստոցվեց 10 տաս հազարավոր, կոտ 1 հարյուր հազարավոր:

00000450000
00000340000
00000230000
00000120000
00000110000
00000100000
00000090000
00000080000
00000070000
00000060000
00000050000
00000040000
00000030000
00000020000
00000010000
00000000000

10 հասւազարսուր

00000450000
00000340000
00000230000
00000120000
00000110000
00000100000
00000090000
00000080000
00000070000
00000060000
00000050000
00000040000
00000030000
00000020000
00000010000
00000000000

1 չարշուր շաքարսուր

Հարյուր հազարը թվանշաններով գրվում ե այսպես՝ 100 000, Քանի թվանշանով և գրված 100 000 լւ

վեց թվանշանով գրվող թիվը կոչվում է վեցանիս թիվ:

Հարյուր հազարավորները թվի մեջ վեցելորդ տեղն են գրավում. Հարյուր հազարավոր երը կազմում են թվերի վեցելորդ կարգը:

239. Կարդացե՛ք և գրեցե՛ք հետեւալ թվերը.

300 000, 700 000, 500 000, 900 000, 400 000, 800 000, 600 000:

240. Թվանշաններով գրեցե՛ք՝ լեռկու հարյուր հազար, ութ հարյուր հազար, չորս հարյուր հազար, վեց հարյուր հազար, լեռեք հարյուր հազար:

241. Համրիչի վրա զցե՛ք, գրեցե՛ք և կարդացե՛ք այն թիվը, վորը բաղկացած ե՝ 7 հարյուր հազարավորից, 5 հարյուր հազարավորից, 8 հարյուր հազարավորից, 9 հարյուր հազարավորից:

242. Համրիչի վրա զցե՛ք 4 հարյուր հազարավոր, դրան ավելացրեք 3 տաս հազարավոր, այնուհետեւ ավելացրեք 6 հազարավոր 3 հարյուրավոր 1 տասնավոր և 9 միավոր. Կարդացե՛ք ստոցված թիվը:

243. Կարդացե՛ք և գրեցե՛ք հետեւալ թվերը.

329 487, 987 362, 942 725, 962 800, 640 000, 802 025, 200 080, 345 009, 600 007, 203 108, 450 070, 760 051, 108 080:

244. Քանի հարյուր հազարավոր, առանձին հազարավոր, առանձին հարյուրավոր, առանձին տասնավոր և առանձին միավոր և պարունակում ենտեւալ թվերից յուրաքանչյուրը.

487 965, 305 241, 560 253, 470 028, 506 078, 200 009, 500 600:

245. Գրեցե՛ք ու կարդացե՛ք այն թիվը, վորը բաղկացած է՝ 2 հարյուր հազարավորից 7 հազարավորից 8 հարյուրավորից և 5 միավորից, 5 հարյուր հազարավորից 3 հարյուրավորից և 7 տասնավորից, 1 հարյուր հազարավորից 2 տաս հազարավորից և 6 միավորից, 8 հարյուր հազարավորից և 4 տասնավորից:

246. Թվանշաններով գրեցե՛ք հետևյալ թվերը՝ լոթ հարյուր լեռեսուն հինգ հազար ութ հարյուր քսան հինգ, լեռեք հարյուր իննսուն լերկու հազար հարյուր քառասուն մեկ, վեց հարյուր լոթանասուն հազար ութ հարյուր հիսուն, չորս հարյուր ութսուն հազար հարյուր վաթսուն, հինգ հարյուր հազար ինն հարյուր, հարյուր հազար չորս հարյուր, ինն հարյուր հազար ութսուն, լեռեք հարյուր քառասուն հազար, լերկու հարյուր հազար ութ, վեց հարյուր հազար ինն:

247. ԽՍՀՄ լերկաթուղարին ցանցը.

Թվականները	լերկաթությունը կիլոմետրներով 1)
1913	Հիսուն ութ հազար հինգ հարյուր քառասուն ինն Յոթանասուն յոթ հազար տասը
1929	Յոթանասուն յոթ հազար քառասուն վեց
1930	Ութսուն մեկ հազար հինգ հարյուր վաթսուն չորս
1932	Ութսուն յերկու հազար վեց հարյուր տասն չորս
1933	Ութսուն յերեք հազար հարյուր իննսուն մեկ
1934	

Այս աղյուսակի թվերը գրեցե՛ք թվանշաններով։

1) Կիլոմետրը = 1000 մ։

248. Տրակառըների արագությունը

Թվականները	ԽՍՀՄ-ում	ԱՄՆ-ում
1925	Հինգ հարյուր յերեսուն յոթ	Հարյուր վաթսուն յոթ հազար հինգ հարյուր յերեսուն յերեք
1927	Ութ հարյուր յոթանասուն յերկու հարյուր հազար չորս	Հինգ հարյուր չորս
1928	Հաղար չորս հարյուր իննը սուն մեկ	Հազար ինն հարյուր յոթանասուն վեց
1930	Քսան հազար յոթ հարյուր Յերկու հարյուր յերկու քսան յոթ	Հազար չորս հարյուր հիսուն ութ
1931	Յերեսուն ինն հազար վեց հարյուր յոթանասուն ինն	Յոթանասուն ութ հազար
1932	Հիսուն հազար վեց հարյուր քառասուն	
1933	Յոթանասուն ութ հազար հարյուր յոթանասուն ութ	
1934	Իննսուն չորս հազար չորս հարյուր յերեսուն ութ	

Աղյուսակում ըերկած թվերը գրեցե՛ք թվանշաններով։

249. 1929 թ. ԽՍՀՄ-ի ֆաբրիկաներում ու գործարաններում դրվեց 9400 նոր դազգլան, 1930 թ. 11800 դազգլան, 1931 թ. 21500 դազգլան և 1932 թ. 31200 դազգլան։ Քանի նոր դազգլան և դրված ֆաբրիկաներում ու գործարաններում առաջին հնդամակի ընթացքում։

250. Վեցանիշ թվի դասերի ու կարգերի ցանցը։

Միավորների կարգը, տասնավորների կարգը և հարյուրավորների կարգը կազմում են միավորների դասը։ Հազարավորների կարգը, տաս հազարավորների կարգը և

հարլուր հաղարավորների կարդը կազմում են նազարա-
վորների դասը:

Թիվը թվանշաններով գրելիս (թիվ այն չորսից ա-
վելի կարգ ունի) մեկ դասը միուսից անջատում են մի-
ջակալքով, որինակ՝ 840 570:

Հազարավորների դաս			Միավորների դաս		
Կարգեր					
արյուրա- վորներ	տասնա- կորներ	միավոր- ներ	հարյուրա- վորներ	տասնա- կորներ	միավոր- ներ
6	5	4	3	2	1
	8	9	3	8	7
	9	0	6	0	5
3	4	5	4	2	9

251. Կարգացե՛ք ցանցում գրված թվերը:

252. Աջից գեպի ձախ վար տեղումն են գտնվում
տասնավորները, հարլուրավորները, հազարավորները,
միավորները:

253. Գրեցե՛ք այն թիվը, վորը բաղկացած ե՛ 4 հար-
լուր հազարավորից 2 տաս հազարավորից և 2 տասնա-
վորից, 8 տաս հազարավորից 6 հազարավորից 8 հարլու-
րավորից և 4 տասնավորից:

254. Հետևալ թվերից լուրաքանչուրը վոր կաբովի
քանի միավոր և պարունակում:

890 470, 6480, 30 040, 205 007, 4000, 50 006:

255. Քաղխորհուրդը տարվա ընթացքում ծախսեց։

Բազնիսի շինարարության վրա . . . 125 760 ռ.

Դպրոցի 160 050 ռ.

Ճանապարհաշինարարության վրա . . . 12 300 ռ.

Հաշվեցե՛ք վորքան գրած և ծախսվել շինարարու-
թյան համար։

256. Կոլտնահսությունը գաշտակին անտեսությունից
ստացավ 32 475 ռ., իսկ անասնապահությունից՝ 17 549 ռ.-
ով պակաս լեկամատ։ Ըստաձենը վորքա՞ն լեկամուտ ստա-
ցավ կորանտեսությունը։

257. Ճանապարհի վերանորոգման համար բաց ե
թողնված 10 000 ռ., վորը 5960 ռ.-ով ավելի լե, քան
անցյալ տարի։ Վորքա՞ն եր բաց թողնված անցյալ տարի։

258. Մի կոլտնահսության լեկամուտը կազմեց 400 000
ռ., վորը 129 600 ռ.-ով ավելի լե, քան անցյալ տարվանիք։
Վորքա՞ն եր կոլտնահսության լեկամուտն անցյալ տարի։

259. Պահեստում կար 41760 գույգ կոշիկ։ Առաջին
որը բաց թողեցին 12 670 գույգ և լերկրորդ որը՝ 15 080
գույգ։ Բանի գույգ կոշիկ մնաց պահեստում։

260. Կոռպերատիվը առաջին որն ստացավ 3680 մ
մանուֆակտորա, լերկրորդ որը՝ 5290 մ։ Առաջին
որը վաճառվեց 789 մ, լերկրորդ որը՝ 2648 մ և
լերրորդ որը՝ 4548 մ։ Բանի մետր մանուֆակտորա
մնաց։

261. Բեռնատար ավտոմոբիլի ինքնարժեքն սկզբում
11 078 ռ. լեր, իսկ կես տարի հետո 4303 ռ.-ով պակա-
սեց, Վորքա՞ն արժեքը բեռնատար ավտոմոբիլը կես տա-
րի հետո։

262. 1928 թ. ԽՍՀՄ-ում կար 14 874 խնարդական
դրամարկղ, իսկ 1932 թ.՝ 58 912։ Վորքանով մեծացավ
ինարդարկան դրամարկղների թիվը այդ ժամանակամի-
ջակալքում։

263. ԽՍՀՄ գործարանների բաց թողած շողեքարչերի, վագոնների և ավտոմոբիլների քանակությունը.

Թվականներ	Շողեքարչեր	Վագոններ	Ավտոմոբիլներ
1928	604	11740	879
1932	970	20028	20501
1934	1211	29504	72466

Հաշվեցեք՝ 1932 թ. քանի՞ շողեքարչ, վագոն և ավտոմոբիլ և ավելի արտադրված, քան 1928 թ.:

264. Բատ պլանի գործարանը պետք է տար 744 900 Տ չուզուն, իսկ փաստորեն ավեց 826 823 Տ: Քանի՞ տոնն ավելի տվեց:

265. Բատ պլանի գործարանը պետք է տար 357 388 Տ պողպատ, բայց ավեց 383 126 Տ: Վորքա՞ն պողպատ ավեց այդ գործարանը պլանից դուրս:

266. Մարզում կային 31 566 անգրագետ և 86 301 կիսագրագետ: Նրանցից դպրոցում սովորում ելին 70 644 մարդ: Քանի՞ մարդ չեր սովորում:

267. Գործարանն ամսվա ընթացքում պետք է տար 72 000 Տ: Առաջին տասնորդակում ավեց 20 365 Տ: Ապրանք, իերկորդ տասնորդակում՝ 31 400 Տ:, և յերրորդում՝ 32 235 Տ: Վորքաննիվ դերակատարվեց պլանը:

ՀՈՌՄԵԱԿԱՆ ԹՎԱՆՇԱՆՆԵՐ

Այն թվանշանները, վորոնցով սովորաբար ոգտվում են թվեր գրելիս, կոչվում են արարական թվանշաններ: Յերեքն ոգտվում են նաև հոռմեական թվանշաններով: Աչպես՝ ամիսները, առավա լեռամայակները, համագու-

մարները և այլն նշանակելու համար հոռմեական թվանշաններ են գործածում:

Ամենից հաճախ հանդիպում են հետեւալ հոռմեական թվանշանները.

I	V	X
1	5	10



268. Տետրում արտադրեցեք 1 ից մինչև 30 թվերը, վորոնք գրված են նշան լեռեք հոռմեական թվանշաններով:

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
1	2	3	4	5	6	7	8	9	10

XI	XII	XIII	XIV	XV	XVI	XVII	XVIII	XIX	XX
11	12	13	14	15	16	17	18	19	20

XXI	XXII	XXIII	XXIV	XXV	XXVI	XXVII	XXVIII	XXIX	XXX
21	22	23	24	25	26	27	28	29	30

269. Հետեւալ թվերը գրեցեք հոռմեական թվանշաններով:

8, 25, 17, 24, 11, 9, 14, 16, 20, 4, 6, 28, 29,
15, 3, 8:

270. Հետեւալ ամսաթվերի մեջ ամիսների անունների փոխարեն հոռմեական թվանշաններով գրեք ամիսների համարները՝ նոյեմբերի 7-ը, մայիսի 1-ը, փետրվարի 23-ը, մարտի 8-ը, հունվարի 21-ը:

271. Կարդացեք հետեւալ ամսաթվերը.
12/III, 6/VII, 1/IX, 18/III, 17/IV, 5/V, 22/VI,
14/VII:

272. Վ. Ի. Լենինի լեզերի ժողվածվի լեռորդ հրատարակությունը բաժանորդագրելիս արվեցին հետեւ հատորները՝ I, V, VIII, XII, XIV, XVIII, XXVII, Հռոմեական թվանշաններով գրեցե՛ք՝ բաժանորդները վո՞ր հատորները դեռ պետք են ստանան, լեթե ընդամենը 30 հատոր են լինելու:

Հարցուր տարին անվանում են դար: Դարը հաշվում են լուրջանչուր հաւուրելորդ տարիա հունվարի 1-ից մինչև հաջորդ հարլուրելորդ տարվա հունվարի 1-ը: Արինակ՝ XIX դարն սկսել է 1800 թ. հունվարի 1-ից և վերացել է 1899 թ. դեկտեմբերի 31-ին: XX դարն սկսել է 1900 թ. հունվարի 1-ին:

273. Վ. Ի. Լենինը ծնվել է 1870 թ., իսկ վախճանվել է 1924 թ.: Հռոմեական թվանշաններով գրեցե՛ք՝ Լենինը վո՞ր դարում և ծնվել և վո՞ր դարում վախճանվել:

274. Ֆրանսական բուրժուատկան հեղափոխությունն սկսվեց 1789 թ.: Այդ վո՞ր դարումն եր:

275. Ստեփան Շաղինի ազգագործությունն սկսվեց 1668 թ.: Այդ վո՞ր դարումն եր:

276. Գրեցե՛ք՝ վո՞ր դարերին են պատկանում հետեւ թվականները.

13-5, 1570, 1848, 1081, 920, 1905:

ՄԻԱՆԻՑ ԹՎԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ

277. Սեկտեմբերին արժեք 5 կոպ.: Ի՞նչ արժեք 4 տետրը: Լուծում:

$$5 + 5 + 5 + 5 = 20 \text{ (կոպ.)}$$

5 թիվը իբրև դուժարելի վերցված են 4 անդամ:

Մի խնի նավասար գումարելիների գումարումը փոխարինվում ենու զուգողությունով՝ բազմապատկումիվ:

Բազմապատկումը գրում են ալպես՝ $5 \times 4 = 20$:

Կարգում են ալպես՝ 5, բազմապատկած 4-ով, հավասար ե 20-ի:

Այն թիվը, վորը բաղմապատկում են (5), կոչվում ե բազմապատկելիի: Այն թիվը, վորով բազմապատկում են (4), կոչվում ե բազմապատկից:

Այն թիվը, վորն ստացվում ե բազմապատկման հետևանքով (20), կոչվում ե արտադրյալ: Բազմապատկելին ու բազմապատկիչը կոչվում են արտադրյալներ:

Միանիշ թիվը միանիշով բաղմապատկելիս սկսվում են բազմապատկման աղլուսակով: Յանկացած միանիշ թվերի արտադրյալն արագ ստանալու համար անընթաց և բազմապատկման աղլուսակն անդիր գիտենալ:

278. Ի՞նչ գործողությունով ենք փոխարինում միքանի հավասար դուժարելիների գումարը:

279. Գրչածայրն արժեք 2 կոպ.: Ի՞նչ արժեք 3 գրչածայրը:

Լուծում:

$$2 \times 3 = 2 + 2 + 2 = 6 \text{ (կոպ.)}$$

280. 2-ի բազմապատկման աղլուսակը:

$$2 \times 2 = 2 + 2 = 4$$

$$2 \times 3 = 2 + 2 + 2 =$$

$$2 \times 4 = 2 + 2 + 2 + 2 =$$

$$2 \times 5 = 2 + 2 + 2 + 2 + 2 =$$

$$2 + 6 = 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 =$$

$$2 + 7 = 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 =$$

$$2 \times 8 = 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 =$$

$$2 + 9 = 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 =$$

$$2 \times 10 = 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 =$$

281. Լուծեցե՛ք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lllll} 2+2= & 2\times 3= & 2\times 4= & 2\times 6= & 2\times 8= \\ 2\times 4= & 2\times 6= & 2\times 5= & 2\times 7= & 2\times 9= \\ 2\times 8= & 2\times 9= & 2\times 10= & 2\times 9= & 2\times 10= \end{array}$$

282. Վորքա՞ն եւ կշռում 2 կիլոգրամանոց 9 կշռաբըլը:

283. Քանի՞ կոպեկ եւ անում 8 լեռկուկոպեկանոց դրամը:

284. Յուրաքանչյուր սովորողին տվին 3-ական տետրէ Քանի՞ տետր տվին 5 սովորողին:

Լուծում.

$$3\times 5=3+3+3+3+3=15 \text{ (տետր):}$$

285. 3-ի բազմապատկճան աղյուսակը:

Յուրաքանչյուր որինակի մեջ բազմապատկումը փոխարինեցե՛ք գումարումով և գտե՛ք արդյունքները: Լուծումը գրեցե՛ք տետրում:

$$\begin{array}{ll} 3\times 2=3+3=6 & 3\times 7= \\ 3\times 3=3+3+3=9 & 3\times 8= \\ 3\times 4= & 3\times 9= \\ 3\times 5= & 3\times 10= \\ 3\times 6= & \end{array}$$

286. Լուծեցե՛ք հետևյալ որինակները.

$$\begin{array}{lllll} 3\times 2= & 3\times 3= & 2\times 5= & 2\times 7= & 3\times 9= \\ 3\times 4= & 3\times 6= & 3\times 5= & 3\times 7= & 2\times 9= \\ 3\times 8= & 3\times 9= & 3\times 8= & 3\times 10= & 3\times 7= \end{array}$$

287. Մեկ տետրին գնում եւ 3 թերթ թուղթ: Քանի՞ թերթ թուղթ եւ հարկավոր 6 տետրի համար:

288. Մեկ տուփ լուցկին արժե 3 կոպ.: 5 տուփի

համար դրամարկղ մուծեցին 20 կոպ.: Վորքա՞ն պետք եւ ստանան:

289. Մեկ շրջանակում կտ 4 ապակի: Քանի՞ ապակի կտա 3 շրջանակում:

Լուծում:

$$4\times 3=4+4+4=12 \text{ (ապակի):}$$

290. 4-ի բազմապատկճան աղյուսակը:

Լուծումը գրեցե՛ք տետրում:

$$4\times 2=4+4=8$$

$$4\times 3=4+4+4=12$$

$$4\times 4=4+4+4+4=$$

$$4\times 5=4+4+4+4+4=$$

$$4\times 6=4+4+4+4+4+4=$$

$$4\times 7=4+4+4+4+4+4+4=$$

$$4\times 8=4+4+4+4+4+4+4+4=$$

$$4\times 9=4+4+4+4+4+4+4+4+4=$$

$$4\times 10=4+4+4+4+4+4+4+4+4+4=$$

291. Լուծեցե՛ք հետևյալ որինակները:

$$\begin{array}{lllll} 4\times 2= & 4\times 3= & 2\times 7= & 4\times 5= & 4\times 8= \\ 4\times 4= & 4\times 6= & 3\times 7= & 4\times 10= & 3\times 9= \\ 4\times 8= & 4\times 9= & 4\times 7= & 4\times 9= & 4\times 7= \end{array}$$

292. Սատինի մետրն արժե 4 ռ.։ Մահուդի մետրը 7 անգամ թանգ եւ: Վորքան արժե մահուդի մետրը:

293. Ի՞նչ գործողություն պետք եւ կատարել 4-ը 6 անգամ մեծացնելու համար:

294. Ի՞նչ գործողություն պետք եւ կատարել 8-ը 5 որավորով մեծացնելու համար:

295. Մատիտն արժե 4 կոպ.: Տետրը 5 անգամ թանգ եւ: Վորքա՞ն արժե տետրը:

296. Բազմոցի լերեսը պատելու համար գնեցին 4 մմուլաթ, մետրը 4 ոռոբլով: Վարպետին իրեկ աշխատավարձ վճարեցին 25 ոռոբլի: Վորքա՞ն արժեցավ բազմոցի լերեսը պատելը:

297. Զուլհակուհին որական վաստակում և 5 ոռոբլի: Վորքա՞ն և նա վաստակում 4 որում: Լուծում.

$$5 \times 4 = 5 + 5 + 5 + 5 = 20 \text{ (ո.)}$$

298. 5-ի բազմապատկման աղյուսակը:

Յուրաքանչյուր որինակի մեջ բազմապատկումը փոխարինեցե՞ք գումարումով և գտե՞ք արդյունքները: Լուծումը գրեցե՞ք տետրում:

$5 \times 2 = 5 + 5 = 10$	$5 \times 7 =$
$5 \times 3 = 5 + 5 + 5 =$	$5 \times 8 =$
$5 \times 4 =$	$5 \times 9 =$
$5 \times 5 =$	$5 \times 10 =$
$5 \times 6 =$	

299. Լուծեցե՞ք հետևյալ որինակները:

$5 \times 2 =$	$5 \times 3 =$	$5 \times 5 =$	$4 \times 7 =$	$3 \times 9 =$
$5 \times 4 =$	$5 \times 6 =$	$5 \times 10 =$	$5 \times 7 =$	$5 \times 9 =$
$5 \times 8 =$	$5 \times 9 =$	$5 \times 8 =$	$4 \times 9 =$	

300. Վեցորդակն ունի 5 աշխատանքալին որ: Քանի աշխատանքալին որ ունի 3 վեցորդակը, 5 վեցորդակը:

301. 7 հինգկոպեկանոց դրամը քանի՞ կոպեկ և անում:

302. Մի բնակարանում ապրում են 5 անձ, մըուսում՝ 6 անգամ ավելի: Քանի անձ են ապրում լերկորդ բնակարանում:

303. Կոշկին պետք ե վճարելին 37 ո.: Գնորդք դրամարկղ տվեց 3 հինգուռլիանոց և 8 լերեքառլիանոց. Վորքա՞ն պետք ե նա լետ ստանա:

304. Լուծեցե՞ք հետևյալ որինակները.

$3 \times 6 =$	$2 \times 7 =$	$4 \times 6 =$	$4 \times 7 =$	$4 \times 8 =$
$4 \times 5 =$	$3 \times 8 =$	$5 \times 4 =$	$3 \times 9 =$	$5 \times 9 =$
$5 \times 6 =$	$5 \times 7 =$	$5 \times 8 =$	$4 \times 4 =$	$3 \times 8 =$

305. Մեկ պատի համար պետք ե 6 մեխ: Քանի մեխ ե պետք 5 պատի համար: Լուծում.

$$6 \times 5 = 6 + 6 + 6 + 6 + 6 = 30 \text{ (մեխ.)}$$

306. Կազմեցե՞ք 6-ի բազմապատկման աղյուսակը: Արդյունքները գտե՞ք գումարելով: Լուծումը գրեցե՞ք տետրում:

307. Լուծեցե՞ք հետևյալ որինակները.

$6 \times 2 =$	$6 \times 3 =$	$6 \times 5 =$	$4 \times 7 =$	$5 \times 9 =$
$6 \times 4 =$	$6 \times 6 =$	$6 \times 10 =$	$5 \times 7 =$	$6 \times 9 =$
$6 \times 8 =$	$6 \times 9 =$	$6 \times 8 =$	$6 \times 7 =$	$4 \times 9 =$

308. Կիսատակառին հաղցնում են 6 ողակապ: Քանի ողակապ ե պետք 7 կիսատակառի համար:

309. Դեռահասը ֆաբրիկալում որական աշխատում ե 6 ժամ: Քանի ժամ ե նա աշխատում 9 որվա ընթացքում:

310. Մեկ ձեռք սպիտակեղենին հասակավոր մարդու համար պետք ե 6 և կտավ, իսկ գեռահասի համար՝ 4 և ընդամենը վորքան կտավ ե պետք 8 ձեռք հասակավորի և 5 ձեռք դեռահասի սպիտակեղենի համար:

311. Բանվորն որական աշխատում եւ 7 ժամ։
Քանի՞ ժամ եւ նա աշխատում 5 որում։
Լուծում։

$$7 \times 5 = 7 + 7 + 7 + 7 + 7 = 35 \text{ (ժամ)}.$$

312. Կազմե՛ցեք 7 ի բազմապատճան աղյուսակը։
Արդյունքներն իմացե՛ք գումարումով։ Լուծումը գրեցե՛ք
տետրում։

313. Լուծեցե՛ք հետևյալ որինակները։

$7 \times 2 =$	$7 \times 3 =$	$7 \times 5 =$	$6 \times 7 =$	$5 \times 9 =$
$7 \times 4 =$	$7 \times 6 =$	$7 \times 10 =$	$7 \times 7 =$	$7 \times 9 =$
$7 \times 8 =$	$7 \times 9 =$	$6 \times 9 =$	$7 \times 8 =$	$7 \times 7 =$

314. Մի սալի վրա դնում են 7 պարկ վարսակ։
Քանի՞ պարկ վարսակ կարելի լե դնել 7 սալի վրա։

315. Վորդին 7 տարեկան եւ Հայըլ վորդուց 5 անգամ մեծ եւ Քանի՞ տարեկան եւ հալըլ։

316. Մի հողամասում աշխատում են 7 կոլտնտեսական, մյուսում՝ 4 անգամ ավելի։ Յերկրորդ հողամասում աշխատող կոլտնտեսականները քանիսով են ավելի։

317. Բանվորը բնակարանին ամսական վճարում ե 4 ո., լուսավորության՝ 2 ո. և ջրի՝ 1 ռուբլի։ Ընդամենը վորքա՞ն ե նա վճարում կես տարվա ընթացքում։

318. Զուլիակը մեկ ժամում արտադրում ե 8 լ գործվածք։ Քանի՞ մետր գործվածք նա կարտադրի 7 ժամում։
Լուծում։

$$8 \times 7 = 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 = 56 \text{ (լ).}$$

319. Կազմեցե՛ք 8-ի բազմապատկման աղյուսակը։

Արդյունքներն իմացե՛ք գումարումով։ Աղյուսակը գրեցե՛ք տետրում։

320. Լուծեցե՛ք հետևյալ որինակները։

$8 \times 2 =$	$8 \times 3 =$	$7 \times 5 =$	$4 \times 7 =$	$3 \times 9 =$
$8 \times 4 =$	$8 \times 6 =$	$8 \times 5 =$	$7 \times 7 =$	$8 \times 9 =$
$8 \times 8 =$	$8 \times 9 =$	$6 \times 8 =$	$6 \times 9 =$	$7 \times 8 =$
$8 \times 7 =$	$8 \times 10 =$	$8 \times 9 =$	$8 \times 8 =$	$6 \times 8 =$

321. Բանջարանոցում տնկեցին կաղամբ, լուրաքանչչուր շարքում 8-ական գլուխ։ Վորքա՞ն կաղամբ տնկեցին 8 շարքում։

322. Բանվորն աշխատեց 7 որեւէ որական վաստակեց 8 ռուբլի։ Ստացած դրամից նա ծախսեց 34 ո. 85 կ.։ Վորքա՞ն դրամ մնաց նրա մոտ։

323. Կոլտնտեսուհին շուկայում վաճառեց 8 կգ միս՝ կիլոգրամը 8 ռուբլով, և 1 հավ։ Հավը 2 անգամ ավելի թանդ ե, քան 1 կգ միսը։ Վորքա՞ն դրամ ստացավ կոլտընտեսուհին։

324. Մեկ կիլոգրամ աղն արժե 9 կոպեկ։ Վորքա՞ն արժե 3 կգ աղը։

Լուծում։

$$9 \times 3 = 9 + 9 + 9 = 27 \text{ (կոպ.).}$$

325. Կազմեցե՛ք 9 թվի բազմապատկման աղյուսակը։ Արդյունքներն իմացե՛ք գումարումով։ Աղյուսակը գրեցե՛ք տետրում։

326. Լուծեցե՛ք հետևյալ որինակները։

$9 \times 2 =$	$9 \times 3 =$	$8 \times 5 =$	$3 \times 8 =$	$3 \times 6 =$
$9 \times 4 =$	$9 \times 6 =$	$9 \times 5 =$	$8 \times 6 =$	$4 \times 9 =$

$$\begin{array}{lllll} 9 \times 8 = & 9 \times 9 = & 7 \times 9 = & 7 \times 7 = & 8 \times 9 = \\ 9 \times 7 = & 9 \times 10 = & 9 \times 7 = & 9 \times 8 = & 9 \times 8 = \end{array}$$

327. Բազմապատկելին հավասար է 9-ի, իսկ բաղմապատկելը՝ 8-ի, ինչի՞ յե հավասար արտադրյալը:

328. Արտադրիչներից մեկը հավասար է 9-ի, իսկ մյուսը՝ 7-ի, ինչի՞ յե հավասար արտադրյալը:

329. Գնած է 6 և թու հատը 9 ուռը, և 55 ու արժողությանը մի սեղան։ Ընդառնը վորքա՞ն է վճարված։

330. 6 սալի վրա գրին 8-ական պարկ հացահատիկ, 5 սալի վրա ել՝ 9-ական պարկ։ Քանի՞ պարկ հացահատիկ դրին բոլոր սալերի վրա։

331. Աշակերտը գնեց 3 մատիս՝ հատը 9 կոպեկով, և 8 տետր՝ հատը 5 կոպեկով։ 1 ոռոքուց վորքա՞ն պետք ե յետ ստանաւ։

332. 7-ը բազմապատկեցե՛ք 8-ով։ Թվերի տեղերը փոխեցե՛ք և 8-ը բազմապատկեցե՛ք 7-ով։ Սահցվեցի՞ն արդյոք միատեսակ արդյունքներ։

333. 5-ը բազմապատկեցե՛ք 6-ով։ Թվերի տեղերը փոխեցե՛ք և 6-ը բազմապատկեցե՛ք 5-ով։ Սահցվեցի՞ն արդյոք միատեսակ արդյունքներ։

Արտադրիների տեղերը փոխելուց արտադրյալը չի փոխվում։

334. Հետեւու որինակներն սկզբում լուծեցե՛ք՝ ինչպես նշված է խնդիրներում, իսկ այնուհետև՝ արտադրիչների տեղերը փոխելով։

$$\begin{array}{lllll} 4 \times 7 = & 3 \times 9 = & 5 \times 5 = & 5 \times 9 = & 4 \times 8 = \\ 5 \times 8 = & 4 \times 6 = & 6 \times 7 = & 6 \times 4 = & 5 \times 9 = \\ 6 \times 9 = & 6 \times 8 = & 4 \times 9 = & 5 \times 6 = & 6 \times 6 = \end{array}$$

335. Լուծեցե՛ք հետեւու որինակները.

$$\begin{array}{lllll} 7 \times 6 = & 8 \times 7 = & 9 \times 8 = & 9 \times 9 = & 7 \times 4 = \\ 7 \times 9 = & 9 \times 6 = & 8 \times 5 = & 5 \times 9 = & 9 \times 4 = \\ 8 \times 4 = & 7 \times 5 = & 9 \times 7 = & 6 \times 7 = & 7 \times 7 = \\ 9 \times 5 = & 8 \times 6 = & 8 \times 8 = & 8 \times 9 = & 6 \times 9 = \end{array}$$

ԲԱԶՄԱՆԻՇ ԹՎԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ ՄԻԱՆԻՇՈՎ

336. Գնացքը մեկ ժամում անցնում է 23 կմ։ Վարքա՞ն կանցնի 3 ժամում։
Լուծում.

$$23 \times 3 = 23 + 23 + 23 = 69 \text{ (կմ)}.$$

23-ի բազմապատկումը 3-ով՝ բանավոր կատարվում է ալսպես։ Նախ 2 տասնավորը բազմապատկում ենք 3-ով՝ ստանում ենք 6 տասնավոր, կամ 60. այնուհետև 3 միավորը բազմապատկում ենք 3-ով՝ ստանում ենք 9 միավոր։ Այնուհետև գումարում ենք 60 և 9 թվերը՝ ընդամենն ստանում ենք 69։

337. Ինչպես ե կոչվում այն թիվը, վորով բազմապատկում ենք։

338. Ինչպես ե կոչվում այն թիվը, վորով բազմապատկում ենք։

339. Իրար հետ բազմապատկող թվերն այլ կերպ ինչպես կարելի յե անվանել։

340. Ինչպե՞ս ե կոչվում բազմապատկումից ստացվող թիվը։

341. Հետևյալ որինակները լուծեցե՛ք բանավոր։

$$\begin{array}{llll} 14 \times 2 = & 21 \times 4 = & 11 \times 6 = & 12 \times 3 = \\ 13 \times 3 = & 34 \times 2 = & 33 \times 2 = & 33 \times 3 = \\ 12 \times 4 = & 32 \times 3 = & 31 \times 3 = & 24 \times 2 = \end{array}$$

342. Զուլհակը մեկ ժամում արտադրում է 18 մ գործվածք։ Քանի մետր գործվածք կարտադրի 2 ժամում, 7 ժամում։

Խնդրի առաջին հարցի պատասխանը գտնում ենք բանավոր։

$$18 \times 2 = 36 \text{ (մ)։}$$

1 տասնավորը բազմապատկեցինք 2-ով, ստացանք 2 տասնավոր, կամ 20։ Այնուհետև 8-ը բազմապատկեցինք 2-ով—ստացանք 16։ Գումարեցինք 20 և 16 թվերը—ստացանք 36։

Խնդրի լերկորդ հարցի պատասխանը գտնում ենք դրավոր։

$$\begin{array}{r} \times 18 \\ 7 \\ \hline 126 \end{array} \text{ (մ)։}$$

8 միավորը բազմապատկում ենք 7-ով—ստանուն ենք 56, կամ 5 տասնավոր և 6 միավոր։ 6 միավորը գրում ենք գծի տակ, իսկ 5 տասնավորը մտքում պահում։ 1 տասնավորը բազմապատկում ենք 7-ով—ստանուն ենք 7 տասնավոր։ 7 տասնավորը գումարում ենք այն 5 տասնավորի հետ, վորն ստացվել եր միավորները բազմապատկելիս,—ստանուն ենք 12 տասնավոր, վորը գրում ենք գծի տակ՝ 6 թվանշանից ձախ։

Դրավոր բազմապատկումն սկսում են սիավորների բազմապատկումից։

343. 75-ը բազմապատկենք 6-ով։

$$\begin{array}{r} \times 75 \\ 6 \\ \hline 450 \end{array}$$

5 միավորը 6-ով բազմապատկելիս ստանում ենք 30, կամ 3 տասնավոր և 0 միավոր։ 0-ն գրում ենք գծի տակ, իսկ 3 տասնավորը մտքում պահում։ 7 տասնավորը բազմապատկում ենք 6-ով—ստանում ենք 42 տասնավոր, իսկ միավորների բազմապատկումից մնացած 3 տասնավորի հետ միասին ստանում ենք 45 տասնավոր, վորը գրում ենք 0-ից ձախ։

344. Հետևյալ որինակները լուծեցե՛ք բանավոր։

$$\begin{array}{llll} 41 \times 3 = & 34 \times 4 = & 45 \times 4 = & 65 \times 7 = \\ 62 \times 4 = & 17 \times 5 = & 35 \times 8 = & 42 \times 9 = \\ 26 \times 2 = & 23 \times 6 = & 51 \times 9 = & 25 \times 6 = \\ 44 \times 3 = & 63 \times 5 = & 52 \times 6 = & 31 \times 8 = \end{array}$$

345. Լուծեցե՛ք հետևյալ որինակները.

$$\begin{array}{llll} 83 \times 9 = & 28 \times 4 = & 96 \times 8 = & 67 \times 8 = \\ 49 \times 7 = & 85 \times 6 = & 43 \times 7 = & 86 \times 9 = \\ 36 \times 9 = & 95 \times 8 = & 58 \times 9 = & 78 \times 7 = \\ 48 \times 8 = & 69 \times 9 = & 72 \times 7 = & 69 \times 8 = \end{array}$$

346. Բանվորը խնայողական գրամարկղ մուծեց ամսական 35 ոռւբլի։ Վորքա՞ն գրամ նա մուծեց 8 ամսում։

347. Գնացքը մեկ ժամում անցնում է 35 կմ։ Վորքա՞ն կանցնի այն 9 ժամում։

348. Խորհունտեսությունում առաջին որն աշխատեց 16 տրակտոր, իսկ լերկորդ որը՝ 4 անգամ ավելի։ Քանի տրակտոր աշխատեց լերկորդ որը։

349. Ճեզրնթաց գնացքը մի ժամում անցնում է
54 ոմ. իսկ սպառնակը՝ 6 անգամ ավելի: Քանի կիլո-
մետր և անցնում սպառնակը մի ժամում:

350. Գնացքը 7 ժամ գնաց, ժամում 46 կմ արագու-
թյամբ. իսկ ութեասրդ ժամում գնաց 25 կմ. Գնացքն
ընդունենը քանի կիլոմետր գնաց:

351. Բանվորուհին 7 ամիս խնազդրամարկղ ժուծեց
ամսակտն 35 ո., իսկ այնուհետեւ զերցրեց 175 ոուբլին
վորքա՞ն գրամ թուեց խնազդրամարկղում:

352. Բանվորը փոխառութեան բաժանորդազրպից
160 ոուբլին 8 ամիս վճարեց անական 16-ական ոուբ-
լին և այս վճարան պետք ե վճարի:

353. 8եմենով լիքը տակառը կշռում է 123 կգ.
Վորքա՞ն էկողի 3 տակառը, 4 տակառը:
Հուծում:

$$\begin{array}{r} \times 123 \\ 3 \\ \hline 369 \text{ (կգ)} \end{array} \qquad \begin{array}{r} \times 123 \\ 4 \\ \hline 492 \text{ (կգ)} \end{array}$$

354. Լուծեցեք հետեւալ որինակները:

$$\begin{array}{lcl} 234 \times 2 = & 352 \times 5 = & 325 \times 8 = \\ 317 \times 2 = & 265 \times 4 = & 436 \times 9 = \\ 34 \times 3 = & 938 \times 8 = & 659 \times 6 = \end{array} \qquad \begin{array}{lcl} 354 \times 6 = \\ 875 \times 8 = \\ 726 \times 9 = \end{array}$$

355. Մինչև կորանտեսութեան մանելը գլուզացին
տորեւան ստանում եր 36 ո., յեկամուա կորանտեսու-
թեանում նրա յեկամուաը մեծացավ 4 անգամ: Տարեկան
վորքա՞ն յեկամուա և նա ստանում կոլանտեսութեանում
զորքա՞ն յեկամուա է 3 ժամ եւ ըստավ ժամում 187 կմ

356. Մոխանակը 5 ժամ թռավ ժամում 195 կմ արա-
գությամբ: Ըստականը քանի կիլոմետր անցավ:

357. Լուծեցեք հետեւալ որինակները:

$$\begin{array}{llll} 365 \times 9 = & 569 \times 7 = & 627 \times 5 = & 675 \times 8 = \\ 876 \times 8 = & 487 \times 8 = & 842 \times 9 = & 325 \times 6 = \\ 725 \times 6 = & 952 \times 5 = & 687 \times 6 = & 485 \times 7 = \end{array}$$

358. Լուծեցեք հետեւալ որինակները:

$$\begin{array}{llll} 4136 \times 2 = & 7375 \times 5 = & 9375 \times 8 = & 8459 \times 8 = \\ 5729 \times 3 = & 6918 \times 6 = & 8291 \times 9 = & 7963 \times 9 = \\ 7386 \times 4 = & 1769 \times 7 = & 3178 \times 7 = & 4395 \times 8 = \\ 9517 \times 6 = & 5372 \times 9 = & 9467 \times 6 = & 6149 \times 9 = \end{array}$$

359. Գրադարանի համար գնեցին 8 պահարան՝ լու-
րաքանչյուրը 265 ո., և 6 սեղան՝ լուրաքանչյուրը 56
ոուբլին: Ընդամենը վորքա՞ն վճարեցին:

360. Կարի արհեստանոց բերին 8 կտոր չիթ՝ լուրա-
քանչյուրը 46-ական մետր, և 7 կտոր՝ 45-ական մետր:
Ընդամենը վորքան չիթ բերին:

361. Խորհանտեսութեանը գնեց 8 տրակտոր՝ լուրա-
քանչյուրը 2875 ոուբլին, և 4 կալսիչ՝ լուրաքանչյուրը
875 ոուբլին: Գնելիս վճարեցին 9500 ոուբլին: Վորքա՞ն
մնաց վճարելու:

ԶԵՐՈՆԵՐ ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼԻՒ ՎԵՐՁՈՒՄ ՅԵՎ ՄԻԶՈՒՄ

362. Գործարանում ցեմենտը լցնում են պարկերը՝
լուրաքանչյուր պարկում 140 կգ: Վորքա՞ն և կշռում 3
պարկ ցեմենտը:

$$\begin{array}{r} \times 140 \\ \hline 3 \\ \hline 420 \end{array} (լո)$$

Բազմապատկելիի մեջ միավորների տեղը դրված է 0,
ուրեմն այդ թիվը բաղկացած է 14 տասնավորից: 14
տասնավորը բազմապատկում ենք 3-ով, ուստի 3 բազ-
մապատկիչը գրում ենք բազմապատկելիի տասնավորնե-
րի տակ: Արտադրյալում տասնում ենք 42 տասնավոր,
կամ 40 միավոր: Ուրեմն, լիմե բազմապատկելին վեր-
ջանում է զերով, ապա այդ զերոն չեն բազմադասու-
կում, այլ կցագրում են տասնավորների բազմապատկու-
մից ստացված արտադրյալին՝ աշ կողմից:

363. Բրիգադն անուանան բաց և թողնում 1700 դուր
կողին: Այդ բրիգադը քանի զույգ կազի բաց կթողնի կես
տարկա ընթացքում:

$$\begin{array}{r} \times 1700 \\ \hline 6 \\ \hline 10200 \end{array} \text{դուր}$$

Բազմապատկելիի վերջում կա լերկու գերու Այդ զե-
րոները չենք բազմապատկում, և 6 բազմապատկիչը գրում
ենք բազմապատկելիի հարութավորների Բվանշանի (7)
տակ, 17 հարութախորը բազմապատկում ենք 6-ով և
ստացված թիվն (102) աշ կողմից կցագրում ենք լերկու
գերու լուծումն արտադրյալը ք տեսրում:

364. Գործարաւր մեկ ամսում արտադրում է 16000 մ
մահուց: Վարքա՞ն մահուց կարտազը այդ գործարանը 8
առանձ:

$$\begin{array}{r} \times 16000 \\ \hline 8 \\ \hline 128000 \end{array} (լ)$$

16 հազարավորը բազմապատկել ենք 8-ով և ստացել
ենք 128 հազարավոր, կամ 128 000:

Բազմապատկելիի վեցում զենվող զերոները չեն բազ-
մապատկում—այդ զերոները կցագրում ենարտադր-
յալին աշ կողմից:

365. Բանավոր լուծեցեք հետեւալ որինակները.

$$\begin{array}{llll} 40 \times 2 = & 50 \times 5 = & 70 \times 6 = & 90 \times 8 = \\ 60 \times 3 = & 80 \times 6 = & 60 \times 7 = & 80 \times 7 = \\ 70 \times 4 = & 40 \times 8 = & 30 \times 9 = & 60 \times 9 = \\ 90 \times 4 = & 60 \times 7 = & 90 \times 8 = & 90 \times 9 = \end{array}$$

366. Լուծեցեք հետեւալ որինակները.

$$\begin{array}{lll} 370 \times 6 = & 2700 \times 6 = & 19000 \times 7 = \\ 560 \times 8 = & 3900 \times 8 = & 28000 \times 4 = \\ 390 \times 9 = & 8400 \times 7 = & 35000 \times 8 = \\ 960 \times 5 = & 6500 \times 8 = & 67000 \times 9 = \end{array}$$

367. Գործարանն ամսական բաց և թողնում 160
դազգլան: Քանի զազգլան բաց կթողնի այդ գործարանը
կես տարկա ընթացքում:

368. Մի բրիգադն որական հավաքում է 200 պարկ
կարտոֆիլ իսկ մկուսը՝ 140 պարկ: Առաջին բրիգադն 5
որում քանի պարկ կարտոֆիլ ավելի լի հավաքում, քան
լերկորզը:

369. Բանավորը հինգ ամիս վաստակել է ամսական
250 ո., իսկ վեցերորդ ամսում վաստակել է 275 ոռու-

լիւ Վորքան զբամ և նս վաստակել 6 ամսվա ընթացքում:

370. Մեկ ձեծ ջրհանն աշխատեց 5 ժամ, իսկ 6 փոքր ջրհաններից լուրաքանչուրը՝ 7 ժամ: Մեծ ջրհանը ձեկ ժամում դուրս եւ քաշում 2700 | (լիտր) զուր իսկ փոքրը՝ 185 |: Վորքա՞ն չուր դուրս քաշեցին ըուրը ջրհանները միասին:

371. Կոլտնտեսությունը գնեց 9 զութան, 6 փոցի և 4 ցանիչ: Գութանն արժե 550 ռ., փոցիը 450 ռ., և ցոնիչը 700 ռուբլի: Վորքա՞ն արժեն բոլոր մեքենաները միասին:

372. 1 մ մահուդ պատրաստելու համար սկետք և 403 գ (զբան) մանվածք: Վորքա՞ն մանվածք եւ պետք 3 մ, 4 մ մահուդ պատրաստելու համար:

$$\begin{array}{r} \times 403 \\ 3 \\ \hline 1209 (\text{ս}) \end{array}$$

3 միավորը բազմապատկում ենք 3-ով, ստանում ենք 9 միավոր: Արտադրվալում միավորների տեղը գնում ենք 9: Անուհետեւ 0 տասնամբորը բազմապատկում ենք 3-ով, ստանում ենք 0 տասնամբոր: Արտադրյալում տասնամբորների տեղը գնում ենք 0: Դրանից հետո 4 հարլուրավորը բազմապատկում ենք 3-ով, ստանում ենք 12 հարլուրը բազմապատկում ենք 3-ով, ստանում ենք .12 հարլուրավոր, կամ 2 հարլուրավոր և 1 հազարավոր: Արտադրյալում հարլուրավորների տեղը գնում ենք 2, և հազարավորների տեղը՝ 1:

$$\begin{array}{r} \times 403 \\ 4 \\ \hline 1612 (\text{ս}) \end{array}$$

3 միավորը բազմապատկում ենք 4-ով, ստանում ենք 12 միավոր, կամ 3 միավոր և 1 տասնամբոր: Արտադրյալում միավորների տեղը գնում ենք 3, իսկ 1 տասնամբորը պահում ենք մտքում: 0 տասնամբորը բազմապատկում ենք 4-ով, ստանում ենք 0 տասնամբոր: Միավորները բազմապատկելիս ստացված 1 տասնամբորն արատդրալում գրում ենք տասնամբորների տեղը: 4 հարլուրավորը բազմապատկում ենք 4-ով, ստանում ենք 16 հարլուրավոր, վորը գրում ենք արտադրյալում:

Լուծումը զրեցեք տետրում:

373. 0-ն բազմապատկեցեք 4-ով: Վորքա՞ն կստացվի:

374. 0-ն բազմապատկեցեք 9-ով: Վորքա՞ն կստացվի:

375. Բանավոր լուծեցեք հետեւյալ որինակները.

$$\begin{array}{llll} 203 \times 2 = & 405 \times 2 = & 308 \times 5 = & 407 \times 8 = \\ 304 \times 2 = & 207 \times 4 = & 209 \times 6 = & 709 \times 9 = \end{array}$$

376. Լուծեցեք հետեւյալ որինակները.

$$\begin{array}{llll} 604 \times 3 = & 608 \times 9 = & 2080 \times 7 = & 4050 \times 6 = \\ 705 \times 7 = & 3060 \times 4 = & 9070 \times 6 = & 5080 \times 5 = \\ 809 \times 4 = & 6090 \times 5 = & 7040 \times 3 = & 6040 \times 8 = \\ 907 \times 5 = & 8050 \times 8 = & 5070 \times 7 = & 9050 \times 9 = \\ 506 \times 8 = & 7906 \times 9 = & 3060 \times 9 = & 6980 \times 7 = \end{array}$$

377. Բրիզագը մեկ որում արտադրում է 480 մ մահուդ: Վորքա՞ն մահուդ կարտադրի ալդ բրիզագը 6 որում:

378. Ֆաբրիկան մեկ որում բաց է թողնում 1800 զուրկ տղամարդու կոշիկ և 350-ով ավելի՝ կանացի կոշիկ: Վորքա՞ն կանացի կոշիկ է բաց թողնում ալդ ֆաբրիկան 8 որում:

379. Տարվա 7 ամիսը 31-ական որ ունի, 4 ամիսը

30-ական որ, և 1 ամիսը՝ 28 որու Քանի՞՞ որ ունի տարբեն:

380. Սավառնակը պետք ե անցնի 3800 կիլոմետրէ 7 ժամ թուավա ժամում 406 կմ արագությանը Քանի՞ կիլոմետր դեռ մնում ե անցնելու:

381. Կոլտնտեսության 8 կովը տարեկան տալիս են 2600-ական լիտր կաթ, իսկ 9 կովը՝ 1950-ական լիտր: Վորքա՞ն կաթ են տալիս բոլոր կովերը միասին մեկ տարում:

382. Լուծեցե՛ք հետեւալ որինակները:

$$\begin{array}{lll} 1403 \times 8 = & 2700 \times 9 = & 3007 \times 8 = \\ 2356 \times 9 = & 5496 \times 8 = & 3476 \times 7 = \\ 3687 \times 5 = & 3567 \times 9 = & 8976 \times 6 = \\ 2608 \times 6 = & 8009 \times 7 = & 6205 \times 9 = \\ 37800 \times 9 = & 13004 \times 8 = & 8040 \times 6 = \end{array}$$

ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻԱՆԻՑ ԹՎԻ ՎՐԱ

ՅԵՐԿԱՆԻՑ ԹՎԻ ԲԱՆԱԳՐ ԲԱԺԱՆՈ ՄԸ ՄԻԱՆԻՑ ԹՎԻ ՎՐԱ

383. 24 մ զործվածքը պետք ե հավասարապես բաժանել 3 բանվորի: Քանի՞ մետր զործվածք կստանա լուրաչանչուրը:

Խողիքը լուծելու համար, պետք ե գտնել մի այնպիսի թիվ, վորը բազմապատկելով 3-ով՝ տալիս ե 24: Ալդեմի թիվը կլինի 8-ը, վորովհետեւ $8 \times 3 = 24$:

Այն գործողությունը, վորի ողնությամբ լուծում են լոյս խնդիրը, կոչվում ե բաժանում:

Բաժանման գործողությունը զբում են աւսպես՝

$$24 : 3 = 8:$$

Յուրաքանչյուրն ստանում ե 8 մ զործվածք:

Այն թիվը, վորը բաժանում ենք (24), կոչվում ե բաժանելի: Այն թիվը, վորի վրա բաժանում ենք (3), կոչվում ե բաժանարար: Այն թիվը, վորն ստացվում ե բաժանման հետեւակով (8), կոչվում ե խնորդ:

384. 7 որում մի բանվոր վաստակեց 63 ոռոբլի: Վորքա՞ն ե վաստակել մեկ որում:

$$63 : 7 = 9 \text{ (ո.)},$$

385. Ինչպես ե կոչվում այն թիվը, վորը բաժանում ենք:

386. Ինչպես ե կոչվում այն թիվը, վորի վրա բաժանում ենք:

387. Ինչպես ե կոչվում բաժանելիս ստացվող թիվը:

388. Բանավոր լուծեցե՛ք հետեւալ որինակները:

$$\begin{array}{ccccc} 10 : 2 = & 12 : 3 = & 16 : 2 = & 24 : 4 = & 27 : 3 = \\ 12 : 2 = & 12 : 6 = & 16 : 4 = & 24 : 8 = & 27 : 9 = \\ 12 : 4 = & 15 : 3 = & 18 : 2 = & 36 : 4 = & 21 : 7 = \end{array}$$

389. Բանավոր լուծեցե՛ք հետեւալ որինակները:

$$\begin{array}{ccccc} 30 : 5 = & 48 : 6 = & 72 : 8 = & 35 : 7 = & 63 : 9 = \\ 30 : 6 = & 48 : 8 = & 72 : 9 = & 72 : 9 = & 56 : 7 = \\ 32 : 4 = & 63 : 7 = & 36 : 6 = & 36 : 4 = & 64 : 8 = \\ 32 : 8 = & 63 : 9 = & 64 : 8 = & 56 : 8 = & 35 : 5 = \\ 45 : 5 = & 56 : 8 = & 49 : 7 = & 81 : 9 = & 40 : 8 = \\ 45 : 9 = & 56 : 7 = & 81 : 9 = & 48 : 6 = & 63 : 7 = \end{array}$$

390. 8 մատաին վճարեցին 48 կոտեկ: Վորքա՞ն արժե 1 մատիտը:

391. 6 միատեսակ գիրքն արժե 24 ոռոբլի: Վորքա՞ն արժե 1 գիրքը:

392. Մի բրիգադում կա 24 մարդ. իսկ մըսւառում՝ 4 անդամ պահան։ Քանի՞ մարդ կա լերկութ ըրիդաղում։

393. Թիվը 8 անդամ փոքրացնելու համար ի՞նչ դործողություն պետք է կատարենք։

394. Թիվը 8-ով փոքրացնելու համար ի՞նչ դործողություն պետք է կատարենք։

395. Քանի կոպեկանոցը քանի՞ հինգկոտեկանոց կանք։

396. Ի՞նչ դործողություն պետք է կատարենք, վորպեսզի խնանանք, թե 4-ը քանի անդամ և պարունակվում 28-ի մեջ։

397. Տնկեցին 8 պարկ կարտոֆիլ։ Հավաքեցին 72 պարկ։ Տնկածից քանի՞ անդամ ավելի կարտոֆիլ հավաքեցին։

398. Մարդը մի ժամում գնում է 6 կմ։ Գնացքը մի ժամում գնում է 42 կմ։ Գնացքը մարդուց քանի՞ անդամ ավելի արագ է գնում։

399. Ի՞նչ դործողություն պետք է կատարենք, վորպեսզի խնանանք, թե 36-ը քանի՞ անդամ է մեծ 4-ից, 8-ը քանի՞ անդամ է փոքր 32-ից։

400. Ի՞նչ դործողություն պետք է կատարենք, վորպեսզի խնանանք, թե 36-ը քանիութիւնը է մեծ 4-ից, 8-ը քանիութիւնը է փոքր 32-ից։

401. 6 սրբիչին և 1 ձեռք սպիտակեղենին վճարեցին 66 ռուբլի։ Մեկ ձեռք սպիտակեղենն արժի 24 ռուբլի։ Վորքա՞ն արժի 1 սրբիչը։

402. 8 սալլով պետք է ուղարկել 72 պարկ աւտոմատ Մեկ պարկ ալլուրը կշռում է 80 կգ։ Քանի կիլոգրամ ալլուր կինի յուրաքանչյուր սալլի վրա, ինթե ալլուրը սալլերի վրա հավասարապես բաժանենք։

403. 8 գրչածալրին և 6 մատաին վճարեցին 72 կո-

պեկ. Վորքա՞ն արժե մեկ դրչածալրը, յեթե մեկ մատիւտըն արժե 8 կոպեկ։

ԲԱՁՄԱՊԻՏԿՄԱՆ ՈՒ ԲԱԺԱՆՑՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

404. Լուծենք հետեւյալ որինակները.

$$1) 54 : 9 = 6 \quad 2) 8 \times 4 = 32$$

Ստուգեցեք լուծումը.

$$1) 6 \times 9 = 54 \quad 2) 32 : 4 = 8$$

Վորպեսզի ստուգենք՝ նիշը ե կատարված բաժանումը թե վայ, բանութիւնը պես ե բազմապատճենին բաժանուառվ. Յեթե բազմապատճենին հետեւանելով ստանանք մի թիվ, վորը հավասար ե բաժանելիքն, ապա բաժանումը նիշը ե կատարվել.

Վորպեսզի ստուգենք՝ նիշը ե կատարված բազմապատճենմբ թե վայ, արտադրյալը պես ե բաժանենք արտադրյաներից մեկի վրա։ Յեթե բաժանումն հետեւանելով ստանանք մի թիվ, վորը հավասար ե մյուս արտադրյանին, ապա բազմապատճենմբ նիշը ե կատարվել.

405. Հետեւյալ որինակները լուծեցեք քանակոր.

$4 \times 6 =$	$8 \times 8 =$	$9 \times 9 =$	$8 \times 6 =$
$24 : 6 =$	$64 : 8 =$	$81 : 9 =$	$48 : 6 =$
$24 : 4 =$	$9 \times 8 =$	$7 \times 6 =$	$48 : 8 =$
$5 \times 5 =$	$72 : 8 =$	$42 : 6 =$	$7 \times 7 =$
$25 : 5 =$	$72 : 9 =$	$42 : 7 =$	$49 : 7 =$
$4 \times 9 =$	$7 \times 8 =$	$9 \times 7 =$	$6 \times 9 =$
$36 : 9 =$	$56 : 7 =$	$63 : 9 =$	$54 : 9 =$
$36 : 4 =$	$56 : 8 =$	$63 : 7 =$	$54 : 6 =$

406. Լուծեցեք հետևյալ որինակները և ստուգեցեք
լուծումները.

$$\begin{array}{llll} 6 \times 7 = & 7 \times 7 = & 8 \times 8 = & 63 \times 7 = \\ 56 : 8 = & 54 : 6 = & 25 : 5 = & 7 \times 6 = \\ 5 \times 6 = & 7 \times 9 = & 5 \times 9 = & 64 : 8 = \\ 36 : 4 = & 40 : 5 = & 36 : 6 = & 7 \times 7 = \\ 48 : 8 = & 8 \times 4 = & 9 \times 9 = & 42 : 7 = \\ 7 \times 8 = & 28 : 7 = & 72 : 8 = & 8 \times 9 = \end{array}$$

407. Լուծեցեք հետևյալ որինակները և ստուգեցեք
լուծումները.

$$\begin{array}{llll} 36 : 9 = & 9 \times 8 = & 8 \times 5 = & 6 \times 9 = \\ 6 \times 7 = & 45 : 9 = & 49 : 7 = & 56 : 7 = \\ 3 \times 9 = & 5 \times 7 = & 18 : 3 = & 42 : 6 = \\ 72 : 9 = & 32 : 8 = & 24 : 4 = & 63 : 9 = \\ 9 \times 7 = & 7 \times 5 = & 35 : 7 = & 64 : 8 = \\ 54 : 9 = & 9 \times 5 = & 30 : 6 = & 45 : 5 = \end{array}$$

408. Բրիգադը պետք է ցաներ 36 նա. Առաջին որը
նա կատարեց պլանի մեկ քառորդ մասը։ Քանի՞ հեկտար
ցանեց բրիգադն առաջին որը։

Խնդիրը լուծելու համար պետք է 36-ը բաժանել
4-ի վրա։

$$36 : 4 = 9 \text{ (նա.)}$$

409. Կոլտնտեսականը կոլտնտեսությունից ստացավ
18 ց հաճար։ Ստացած հաճարի կեսը նա վաճառեց։ Վոր-
քա՞ն հաճար վաճառեց։

410. Բանվորուհին ուներ 56 ոռոբլի։ Այդ դրամի
մեկ ութերորդ մասով նա կրկնակռնիկ գնեց։ Վորքա՞ն
արժե կրկնակռնիկը։

411. Դասարանում կա 24 սովորող։ Սովորողների
մեկ լեռորդ մասը կազմում են տղամարդիկ։ Քանի՞ աղա-
մարդ կա դասարանում։

ՅԵՌԱՆԻՑ ԹՎԻ ԲԱՆԱՎՈՐ ԲԱԺՄԱՋԵՄ ՄԻԱՆԻՑԻ ՎՐԱ

412. Դպրոցի համար գնեցին 848 ռ. գիրք, լուրա-
քանչյուր գիրքը 4 ոռոբլով։ Քանի՞ գիրք գնեցին։

$$\begin{array}{r} 848 | 4 \\ - 8 \\ \hline 4 \\ - 4 \\ \hline 8 \\ - 8 \\ \hline 0 \end{array} (գիրք)$$

Նախ 8 հարկուրավորը բաժանում ենք 4-ի վրա—
քանորդում ստանում ենք 2 հարկուրավոր։ Այսուհետև 4
ստանավորը բաժանում ենք 4-ի վրա— քանորդում ստա-
նում ենք 1 ստանավոր։ Վերջապես 8 միավորը բաժա-
նում ենք 4-ի վրա—քանորդում ստանում ենք 2 միավոր։
Քանորդում ընդամենը կստանանք 212։

413. Հետևյալ որինակները լուծեցեք բանավոր։

$$\begin{array}{llll} 369 : 3 = & 448 : 4 = & 396 : 3 = & 963 : 3 = \\ 284 : 2 = & 999 : 3 = & 666 : 6 = & 777 : 7 = \\ 639 : 3 = & 846 : 2 = & 682 : 2 = & 884 : 4 = \\ 484 : 4 = & 555 : 5 = & 888 : 4 = & 693 : 3 = \end{array}$$

ՄՆԱՅԵՐԴԱՎ ԲԱԺԱՆՈՒՄ

414. Քանի՞ որ 1 բաժականացնի 51 կը վարսակը, թե
թե որական գործադրեն 8 կզ:

51-ը բաժանում ենք 8-ի վրա: Բազմապատկման ող-
յուսակում շկա մի այնպիսի թիվ, գորն 8-ով բազմա-
պատկելիս ստացվի 51: Վորոնենք այն թիվը, գորն 8-ով
բազմապատկելիս 51-ին մոտ թիվ ստացվի: Այդպիսի է բ-
կու թիվ կա 6-ը և 7-ը, 6-ն 8-ով բազմապատկելիս կստա-
նանք 48, իսկ 7-ն 8-ով բազմապատկելիս կստանանք
66:

Վարսակը 7 որ չի բաժականացնի: Այն կբաժակա-
նացնի 6 որ: Բայց 6 որում ծախսված կլինի միայն
48 կզ: Սաացվում ե վարսակի մնացորդ: Վորովեսպի իստա-
նանք, թե վորքան և մնացորդը, 51 որից պետք ե հա-
նենք 48 կզ:

Խնդրի պրավոր լուծումը դասավորում են այսպես.

$$\begin{array}{r} -51 \\ \hline 48 \\ \hline 3 \end{array} \left| \begin{array}{r} 8 \\ \hline 6 \quad (\text{կզ}) \end{array} \right.$$

մնացորդ

Մնացորդը բաժանաբարից միշտ պետք ե փոքր թինի:
Սառագում՝ վարսակի միենաված պաշարից 6 որքա ըն-
թացքում տիրին որակոն 8 կզ: Վորքան վարսակ եր
միենաված, յեւ ե մնաց 3 կզ:

$$8 \times 6 = 48 \text{ կզ տիրին,}$$

$$48 + 3 = 51 \text{ կզ ոթերեցին:}$$

Գուշենզի ոսուզենք, թե արդյո՞ւ նի՞շ ե իմտարքուն
մնացութիւն բաժանումը, պետք ե բանուդը բազու-
պատկել բաժանաբարով յեւ ստացված աւաշըյալին

ամենացնել մնացաւը: Յորև ստացված թիվը նախա-
լաւ ե բաժանելիին, ապա բաժանումը երօ ե իմ-
տարքեր:

